**Կայացավ մարզպետ Գաբրիել Գյոզալյանի տարեսկզբի ասուլիսը**

Տեղի ունեցավ մարզպետ Գաբրիել Գյոզալյանի տարեսկզբի ասուլիսը: Մարզպետը ներկայացրեց 2016 թվականի ընթացքում մարզում իրականացված ծրագրերը եւ առաջիկա անելիքները:
Մարզային լրատվամիջոցների ղեկավարներն ու լրագրողները տեղեկացան, որ դեկտեմբերի 22-ի դրությամբ մարզում ըստ ոլորտների կատարվել կամ ընթացքի մեջ է շուրջ 34 ներդրումային ծրագիր, որոնց համար ֆինանսավորումը կազմել է՝ շուրջ 6,525,766.0 հազար դրամ: Այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է՝ շուրջ 5,383,766.0 հազար դրամ, բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների և այլ ծրագրերի միջոցներից՝ շուրջ 668,000.0 հազար դրամ, մարզի համայնքների բյուջեներից՝ շուրջ 474,000.0 հազար դրամ:
Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են հետեւյալ կերպ. արդյունաբերություն՝ 1.9 %, գյուղատնտեսություն 10.0 %, շինարարություն՝ 3.7 %, մանրածախ առևտուր՝ 1.3 %, ծառայություններ՝ 0.8 %